

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 6

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

12 մարտի 2019թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 16-ը (ներկայաբերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

Օրակարգում՝

1. Երևանի պետական համալսարանում առկա խնդիրների քննարկում և առաջարկությունների ներկայացում:
2. Երևանի պետական համալսարանի շուրջ ստեղծված իրավիճակի քննարկում:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանին, ով գիտխորհրդի անդամներին ներկայացրեց վերջին օրերին ինստիտուտի ամբիոններում տեղի ունեցած նիստերում քննարկված հարցերը և ներկայացված առաջարկությունները:

Ելույթ ունեցան՝ Գիտխորհրդի անդամներ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը, ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, ք.գ.թ. Ս. Պետրոսյանը և այլոք, ովքեր նշեցին, որ լաբորատոր դասերը, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը պատշաճ մակարդակով իրականացնելու համար հաճախ բացակայում են բավարար քանակով քիմիական նյութեր և ռեակտիվներ: Դրանք ձեռք են բերվում գնումների ընթացակարգի կիրառմամբ, ինչը շատ հաճախ խանգարում է ուսումնական պրոցեսին: Ելույթ ունեցողները նշեցին նաև, որ հաճախ ստորագրված զեկուցագրերը ժամանակին չեն հասնում

հասցեատերերին կամ անհետանում են: Գիտխորհրդի նիստին ներկա անդամները միաձայն դատապարտեցին նաև ԵՊՀ-ի շուրջ վերջին օրերին տեղի ունեցող իրադարձությունները:

Նիստի ընթացքում հնչած տեսակետների, ինչպես նաև ամբիոնների կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա գիտական խորհուրդը որոշեց՝

1. Անհրաժեշտ է կատարելագործել գնումների կազմակերպման գործընթացը, քանի որ վերջինս հաճախ խոչընդոտներ է ստեղծում քիմիական նյութերի, լաբորատոր սարքավորումների և ապակեղենի ժամանակին ձեռք բերման հարցում, ինչն էլ իր հերթին խնդիրներ է առաջացնում ուսումնական և գիտահետազոտական աշխատաքներն առավել արդյունավետ իրականացնելու համար:
2. Ֆարմացիայի ինստիտուտի կոլեկտիվը բարձր է գնահատում ԵՊՀ ղեկավարության՝ հանձինս ռեկտորի գործունեությունը, երկրի համար անչափ կարևոր ֆարմացիայի ուղղության զարգացմանը խթանելու կապակցությամբ: Համալսարանում ստեղծված է տարածաշրջանում համարժեքը չունեցող կրթական, գիտական և ինովացիոն (ներդրումային) գործառույթներով գիտակրթական կոմպլեքս՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ, համալրված ժամանակակից ուսումնական և հետազոտական լաբորատորիաներով, որի գլխավոր առաքելությունը համարվում է միջազգային չափորոշիչներին համապատասխան ղեղագետ մասնագետների պատրաստումը, ինչը երկրում ֆարմինդուստրիայի զարգացման գլխավոր բաղադրիչներից է:
3. Ինստիտուտի կոլեկտիվը ցավով է ընդունում և խստիվ դատապարտում է վերջին ժամանակներս ԵՊՀ-ի շուրջ տեղի ունեցող ոչ կառուցողական իրադարձությունները: Երևանի պետական համալսարանը, որպես հանրապետության մայր բուհ, եղել է, կա և կմնա հայ ժողովրդի առաջատար գիտակրթական կազմակերպությունը, որը միշտ եղել է ինչպես համալսարանականների, այնպես էլ ժողովրդի պարծանքը և մշտապես ստացել է

պետության համարժեք բարոյական աջակցությունը: Գտնում ենք, որ Երևանի պետական համալսարանը այսօր էլ պետք է լինի լիարժեք պաշտպանված և գնահատված ինչպես ժողովրդի, այնպես էլ՝ պետության կողմից:

4. Ինստիտուտի կոլեկտիվը չի ընդունում նաև ԵՊՀ 100-ամյա հոբելյանի կապակցությամբ ՀՀ ԿԳՆ պասիվ դիրքորոշումը: Առ այսօր ստեղծված չէ կառավարական հանձնաժողով՝ ԵՊՀ 100-ամյա հոբելյանին նվիրված կազմակերպական աշխատանքները կատարելու համար, չնայած այն հանգամանքին, որ մնացել է շատ քիչ ժամանակ: Տեսնելով, թե ինչպիսի ֆինանսական և բարոյահոգեբանական աջակցություն են ստանում հարևան պետությունների մայր բուհերն իրենց կառավարություններից՝ գտնում ենք, որ ՀՀ ԿԳՆ-ն ղեկավարությունը պետք է անհապաղ փոխի իր դիրքորոշումը ԵՊՀ 100-ամյա հոբելյանի կազմակերպման հարցում, ստեղծի կառավարական հանձնաժողով և սկսի իրականացնել կազմակերպական գործառույթները:

**Գիտական խորհրդի նախագահ,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝**

Ա. Սադյան

Գիտական քարտուղար, ք.գ.թ՝

Ա. Դադայան